ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռ. (0322)6-87-81, Lernapat.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

18 հունիսի 2019 թվականի թիվ16 -Ա

## ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 06-041-0159-0006 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱԼԵՔՍԱՆ ԱՎԵՏԻՔԻ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալեքսան Ավետիքի Հակոբջանյանի դիմումը, ժառանգության իրավունքի 17.04.2019թ. վկայագիրը գրանցված սեղանամատյանում 1346, սեփականության իրավունքի թիվ 1711498 վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 24 կետով և ՀՀ կառավարության 16.02.2016 թ. N 2387-Ն որոշման 48 կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Լեռնապատ համայնքի 06-041-0159-0006 ծածկագրով, 0,02998 հա բնակելի կառուցապատման հողամասը ճանաչել Ալեքսան Ավետիքի Հակոբջանյանի (ծնվ.1976թ) սեփականության իրավունքը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել փոստային հասցե գ Լեռնապատ 11փողոց 9/2:

3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

2019թ. հունիսի 18
գ. Լեռնապատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լեռնապատ համայնք, գ.Լեռնապատ,
Լեռնապատի գյուղապետարան
հեռ. /0322/-68781

# ՈՐՈՇՈՒՄ

02 հուլիսի 2019 թվականի թիվ 17 -Ա

## ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 06-041-0133-0016 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անահիտ Ռաֆիկի Թամարյանի դիմումը, Ա-Զ « Գ. Վեքիլյան»-ի կողմից կազմված հատակագիծը և բնութագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7-րդ հոդվածով, 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վերականգնել Լեռնապատ համայնքի 06-041-0133-0016 ծածկագրի տակ գտնվող տնամերձ հողամասի հողհատկացման փաստաթղթերի հիմքերը
   ա) հողամասի մակերեսը 0.12182 հա
   բ) հողամասի սահմանները համաձայն հաստատված հատակագծի
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասը 0.12182 հա անհատույց սեփականության իրավունքով հատկացնել և ճանաչել Անահիտ Ռաֆիկի Թամարյանի/ ծնվ. 16,12,1956թ./, սեփականության իրավունքը:
3. Լեռնապատ համայնքի 06-041-0133-0016 ծածկագրում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա չգտնվող, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1960թ. կառուցված 116 քմ բնակելի տունը,ճանաչել Անահիտ Ռաֆիկի Թամարյանի սեփականության իրավունքը:
4. Տնտեսությանը տրամադրել փոստային հասցե՝ գ. Լեռնապատ 4 փող 1փակուղի թիվ 6:
5. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

Համայնքի ղեկավար՝ Ս. Արազյան

2019թ հուլիսի 02
Գ. Լեռնապատ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռախոս /032268781/, Lernapat.Lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՀՈՒԼԻՍԻ 2019թվականի N 18-Ա

## ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱԽՇՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենք 1-ին հոդվածի 2-րդ մասով, 37 հոդվածով և հաշվի առնելով Լեռնապատ համայնքի ավագանու 2019թ.-ի հուլիսի 03-ի թիվ 28-Ն <<Լեռնապատ համայնքի 2019թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին>> որոշումը՝

Որոշում եմ.

1. Հաստատել Լեռնապատ համայնքի 2019թ.-ի փոփոխված բյուջեի՝ եռամսյակային համամասնությունները համաձայն հավելված 1-ի և հավելված 2-ի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնապատ համայնքի ղեկավարի 2019թ.-ի փետրվարի 07-ի <<Լեռնապատ համայնքի 2019թ.-ի բյուջեի եռամսյակային բախշումը հաստատելու մասին >> N05-Ա որոշումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ**

2019թ. հուլիսի 03
գ.Լեռնապատ